մտածումներն ու խորհրդածությունները կիսեց այս շրջանի իր զավակների հետ՝ բացատրելով Մեծ Պահքի շրջանի էությունն ու իմաստը և այդ գեղեցիկ ավանդություններին ամուր փարվելու անհրաժեշտությունը, շեշտելով արժեքները գնահատելու գիտակցության կարևորությունը. «Մարդն է, որ արժեք է տալիս և՛ նյութին, և՛ գործիքին: Այս է, որ Մեծ Պահքի այս քառասնօրյա շրջանին մեր եկեղեցական արարողությունների, ընթերցումների միջից մենք պիտի ձգտենք, որ մեր ժողովուրդն առավել ևս զորանա դեպի ներքին բարեփոխություն և բարեկարգում հառաջանալու ընթացքի մեջ», — եզրափակեց Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը, ուշ երեկոյան, Նորին Սրբությունը վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՅՐԱԿԱՆ ԱՅՑԸ ԳՅՈՒՄՐԻԻ ՅՈԹՎԵՐՔ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Սույն թվականի մարտի 12-ին Գարեգին Վեհափառը, ուղեկցությամբ Տաթև արք. Սարգիսյանի, Ասպետ վրդ. Պալյանի, Արտակ աբղ. Տիգրանյանի, Բագրատ աբղ. Գալստյանի, Կարապետ աբղ. Հարությունյանի և Աշոտ աբղ. Մնացականյանի, այցելեց Շիրակի թեմ՝ Գյումրիի Յոթվերք Ս. Աստվածածին եկեղեցի՝ Մեծի Պահոց քառասնօրյա պահեցողության և ապաշխարության շրջանի կարևորությունը բացատրելու, ժողովրդին զորացնելու և լիցքավորելու նախաձեռնությամբ: Սա Վեհափառ Հայրապետի՝ Մեծի Պահոց շրջանում երրորդ այցելությունն էր իր հավատացյալ ժողովրդին, Երևանի Ս. Սարգիս և Աշտարակի Ս. Մարինե եկեղեցիներն այցելելուց հետո:

Գյումրի քաղաքի մուտքին Նորին Սրբությանը դիմավորեցին Շիրակի թեմի հոգևոր դասը, թեմական խորհրդի ատենապետ պրն. Մարտին Թադևոսյանը, մարզպետարանի ներկայացուցիչ պրն. Ավետիք Հարությունյանը, մարզի պետական, պաշտոնական ներկայացուցիչները:

Գյումրիում Վեհափառ Հայրապետը, Գյումրիի ամբողջ հոգևոր դասի, դպրեվանքի ուսանողության և ժողովրդի հոծ բազմության ուղեկցությամբ, մուտք գործեց Յոթվերք Ս. Աստվածածին եկեղեցի, որտեղ պաշտված խաղաղական ժամերգությունից հետո, Նորին Սրբությունը իր հայրական խոսքն ուղղեց ժողովրդին՝ ասելով. «Մեծ Պահքը մեր հոգևոր գարունն է: Եվ այս օրերը մեր ներաշխարհը մաքրելու, բյուրեղացնելու, զորացնելու և գարնանացնելու օրեր են: Հետևաբար, մենք ուրիշներին չնայենք, այլ հայացքներս բևեռենք մեր ներքին մարդու վրա: Ուրիշներին նայելով մենք մեզ ավելի մեծ վնաս ենք հասցնում: Թողնե՛նք: Ապրենք մտքով, խոսքով և գործով բարին արարելու նախաձեռնությամբ, որպեսզի Հարության օրերին չմնանք մեռյալներ, այլ արժանանանք այդ Ս. Հարությանը»:

Այնուհետև իր ժողովրդի հետ անմիջական խոսակցություններ ունենալով և ծանոթանալով նրանց կարիքներին ու ապրումներին, Վեհափառ Հայրապետը երեկոյան վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԸ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

Մարտի 17-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Կոտայքի թեմ: Սույն ուղևորությունը, Մեծի Պահոց շրջանի քարոզների շրջանակներում, Նորին Սրբության հերթական այցելությունն էր:

Մարզի սահմանագլխին Վեհափառ Հայրապետին աղ ու հացով դիմավորեցին